ԳՐԱԽՕՍՈՒԹԻՒՆ ԵՒ ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹԻՒՆ

ԱՐՍԵՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, ԱՐՓԻՆԵ ՍԻՄՈՆՅԱՆ, «ԶՈՐԱՎՈՐ» ԱՎԵՏԱՐԱՆԸ, ԽՄԲ.՝ ԳԵՒՈՐԳ ՏԵՐ-ՎԱՐԴԱՆՅԱՆ, ԵՐԵՒԱՆ, «ՆԱՀԱՊԵՏ» ՀՐԱՏ., 2016, 64 ԷՋ:

Ավետարանները, սուրբգրային արժեքից զատ, պատմամշակութային ինքնատիպ հուշարձաններ են: Մեզ է հասել ձեռագիր ավետարանների մի ողջ շտեմարան, որը միջնադարյան ձեռագրական ժառանգության զգալի մասն է կազմում: Դրանք աչքի են ընկնում գրչարվեստի եւ մանրանկարչության վարպետությամբ, ինչպես նաեւ կաշեպատ ու մետաղյա ճոխ կազմերով: Ավետարանների մանրանկարչությունն իր գեղարվեստական տարբեր ուղղություններով կապված է հիմնականում կրոնապաշտամունքային երեւույթների վերարտադրման հետ եւ ստեղծված է նաեւ ընթերցողի գեղարվեստական ճաշակը բավարարելու համար: Անկախ թեմատիկայի նույնությունից՝ Ավետարանում սրբազան բոլոր իրադարձությունները, պաշտամունքային զանազան առարկաները, մանրանկարչական յուրաքանչյուր դպրոց ներկայացնում է տվյալ միջավայրի գեղարվեստական յուրահատկություններին համահունչ:

Մանրանկարչությունը գործնականում առնչվել է ավետարանական նկարազարդման հետ. ահա թե ինչու ձեռագրագիտության պատմության մեջ կարեւոր տեղ է հատկացվում մանրանկարչությանը:

Տարբեր ավետարանների վերագրվում է որեւէ զորություն՝ զանազան հրաշագործություններ, հիվանդությունների բժշկում, խնդրակատար հատկանիշներ: Այս շարքին է պատկանում Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ Տ. Նավասարդ արք. Կճոյանի օրհնությամբ, Զորավոր Ս. Աստվածածին եկեղեցու հոգեւոր հովիվ Տ. Գրիգոր քահանա Գրիգորյանի նախաձեռնությամբ, Գեղամ եւ Արամ Ղուկասյանների մեկենասությամբ, Մատենադարանի երիտասարդ գիտաշխատողներ

Ա. Հարությունյանի ու Ա. Սիմոնյանի աշխատասիրությամբ վերջերս հրատարակված «Զորավոր» Ավետարանը» պատկերագիրք-ուսումնասիրությունը, որտեղ առաջին անգամ փորձ է արված հանգամանալից քննության ենթարկելու ՄՄ Հ^{մր} 4060 «Ավետարան» ձեռագրի ստեղծման, ապա՝ տարբեր վայրեր փոխադրման պատմությունն ու մանրանկարչական արվեստը: Աշխատության արժեքներից մեկը վավերագրական հագեցվածությունն է, փաստագրական նյութի հարստությունն ու գիտահետազոտական հիմնավորումը:

Աշխատությունն ունի «Երկու խոսք» վերնագրով ներածություն, որտեղ արձանագրվում է ՄՄ մի շարք ձեռագրերի գրչական ու մանրանկարչական բացառիկ կատարելությունը, առանձնանում են հանրության մեջ «հրաշագործ», «խնդրակատար», «զորավոր» եւ այլ անվանումներ ստացած ձեռագրերը: Պատմվում է նաեւ «Զորավոր» Ավետարանի ուսումնասիրման գաղափարը հղանալու մասին, որը պայմանավորված է Ավետարանը՝ Ս. Մովսես Տաթեւացի հայրապետի հիշատակության օրը Զորավոր Ս. Աստվածածին եկեղեցի տանելով, երբ եկեղեցու քահանա Տ. Գրիգոր Գրիգորյանն իր ցանկությունն է հայտնում գիտաշխատողներին՝ կազմելու մի ամփոփ եւ ընդգրկուն ուսումնասիրություն, որի նպատակը կլինի հանրությանն ու հավատացյալներին հաղորդակից դարձնել մինչ օրս պատշաճ ուշադրության չարժանացած մագաղաթյա հուշարձանի ստեղծման ու տարբեր վայրեր փոխադրման պատմությանը, գրչարվեստին, մանրանկարչությանը, հիշատակարանին եւ, վերջապես, «Զորավոր» կոչվելու ավանդությանը:

Նախաբանին հաջորդում է ՄՄ ձեռագրագիտության եւ Մայր ցուցակի բաժնի գիտաշխատող, ՀՀ ԳԱԱ հնագիտության եւ ազգագրության ինստիտուտի ավագ գիտաշխատող, պատմական գիտ. թեկնածու Ա. Հարությունյանի ուսումնասիրությունը «Զորավոր» Ավետարանի ստեղծման ժամանակի ու հիշատակարանների մասին: Ա. Հարությունյանը բերում է նախ հայագիտության մեջ շրջանառվող այն կարծիքը, ըստ որի՝ «Զորավոր» Ավետարանը բազում ընդհանրություններ ունի կիլիկյան նշանավոր՝ Սմբատ Գունդստաբլի Ավետարանի հետ, վերլուծության ենթարկում այդ խնդրում հայագետներ Ա. Մաթեւոսյանի, Լ. Խաչիկյանի տեսակետները: Ըստ արժանվույն գնահատելով Լ. Խաչիկյանի տեսակետը, միաժամանակ ուշադրությամբ ուսումնասիրելով մագաղաթյա մատյանին կցված թղթյա երկու էջերի հիշատակարանները՝ ճշգրտում է վերջինիս տեսակետն ու պարզում, որ Բջնիի եւ Արարատյան թեմի առաջնորդ Մանուել

եպիսկոպոսը հեղինակն է ոչ թե ողջ ձեռագրի, այլ ընդամենը վերջինիս գրչին է պատկանում ձեռագրի գնման եւ ընծայման պատմությունը: Այն գնվել է Երեւանցի Վիշապի (Ուշապ) ու Ջանանի որդի Հակոբի արդար վաստակով, մոտավորապես ԺԳ. դարավերջին տեղափոխվել է Երեւանի Երկուերեսնի կոչվող եկեղեցի: Ա. Հարությունյանն անդրադառնում է նաեւ ձեռագրի մեկ այլ կազմողի կամ նորոգողի հիշատակարանին՝ Երկերեսնի եկեղեցու սպասավոր Ներսես Մոկացու վկայությանը, որի համաձայն՝ «Վիշապկենց» կոչվող Ավետարանի գորությանը շատերն են հիշյալ շրջանում ականատես եղել:

Ձեռագրի ուսումնասիրության հետաքրքիր մասերից է նաեւ Ավետարանի հանգրվանման պատմությունը, որտեղ հեղինակն անդրադառնում է երբեմնի գոյություն ունեցած եւ շատերին անհայտ Երեւանի Երկուերեսնի կոչված եկեղեցուն. ձեռագրի ե՛ւ ստացողի, ե՛ւ կազմողի հիշատակարաններում վկայված է այս եկեղեցու մասին: Նախորդ ուսումնասիրողները, այդ թվում նաեւ հնագետ-վիմագրագետ Կ. Ղաֆադարյանը, հիշատակում են Ավետարանը Երկերեսնի եկեղեցուն ընծայելու մասին, սակայն այլ տեղեկություններ չեն հայտնում:

Ա. Հարությունյանն այդ տեղեկությունը գտնում է մի քանի աղբյուրներում՝ նախ՝ ԺԷ. դարի պատմագիր Առաքել Դավրիժեցու երկասիրության մաս կազմող՝ Հովհաննիսիկ Ծարեցու ժամանակագրության մեջ, որտեղ նշվում է, որ Երեւանի «Երկու երես» կոչվող եկեղեցին քանդվել է 1583 թ. (եկեղեցին այդպես է կոչվել երկու բեմ ունենալու համար)՝ Մուրադ Խոնդկարի հրամանով՝ Ցահրադ զորապետի ասպատակության հետեւանքով: Ապա այդ տեղեկությունը գտնում է Հովհաննես եպիսկոպոս Շահխաթունյանցի ուսումնասիրության մեջ: Երկերեսնին հիշատակում է նաեւ Զաքարիա Ագուլեցին: Վերը նշված հեղինակներից, սակայն, ոչ մեկը չի պարզում կառույցի՝ Երեւանի տարածքում գտնվելու որոշակի վայրը: Երբեմնի եկեղեցին նույնացվել է Երեւանի Ս. Պողոս-Պետրոս եկեղեցու հետ: Նույնացման հարցի խնդիրը լուծելու համար Ա. Հարությունյանը համակողմանիորեն քննում է Թ. Հակոբյանի, Ա. Ժամկոչյանի, Ֆրանսիացի ճարտարապետ Ժան Շարդենի, Երվանդ Շահազիզի վարկածները: Ի վերջո, հեղինակը հավաստում է Շահազիզի կարծիքը, որ Երկուերեսնի եկեղեցու ավերումից կամ անշքացումից հետո ձեռագիրը հանգրվանել է Ս. Անանիա առաքյալի մատուռի տեղում՝ Մովսես վարդապետ Տաթեւացու (հետագայում՝ կաթողիկոս. 1629-1632 թթ.) հիմնած համանուն վանքում՝ ներկայումս Զորավոր Ս. Աստվածածին եկեղեցում

(կառուցվել է Նահապետ Ա. Եղեսացի (1691-1705 թթ.) կաթողիկոսի օրոք՝ 1693-1694 թթ., խոջա Փանոսի միջոցներով. էջ 24):

Այնուհետեւ «Զորավոր» Ավետարանը հանգրվանում է իր անվամբ կոչվող Զորավոր Ս. Աստվածածին եկեղեցում: Վկայակոչելով Ե. Շահազիզին՝ Ա. Հարությունյանն ընդգծում է վերոբերյալ տեղեկությունը, որ եկեղեցում երկար ժամանակ պահվող մի հրաշագործ Ավետարանի պատճառով Ս. Աստվածածինը կոչվել է նաեւ Ս. Զորավոր, երբ 1835 թ. Ս. Անանիայի անապատը դադարել է մենաստան լինելուց եւ դարձել ծխական եկեղեցի՝ հանձնվելով Մարաղայի գաղթականներին (մինչեւ ծխական եկեղեցի դառնալը՝ վանքը հայտնի է եղել իբրեւ Ս. Անանիա առաքյալի անապատ): Հենց մարաղացիների խոսակցական լեզվում էլ եկեղեցին կոչվել է Ս. Զորավոր՝ դառնալով յուրահատուկ երդման կամ վկայության բանաձեւի առարկա՝ «Էն սուրբ Զօրաւորը վկայ, էն սուրբ Զօրաւորը գիտենայ» (էջ 15): Այս նույն վկայությունը բերում է նաեւ Կ. Ղաֆադարյանը:

Ավետարանի հաջորդ հանգրվանը Արտագի Ս. Թադեոս առաքյալի վանքն է եղել, որտեղ տեղափոխվել է անհայտ պատճառներով, իսկ 1911 թ. տարվել է Ս. Էջմիածին: Վերջին հանգրվանը (1939 թ.) Մաշտոցի անվան Մատենադարանն է:

Ուսումնասիրությանը կից բերվում է Ավետարանի մասին բանավոր ավանդություն, որ ցանկանում ենք հատուկ ընդգծել, ըստ որի՝ Ավետարանը գրվել է Սեւանի անապատում եւ թշնամու ասպատակություններից մեկի ժամանակ հայտնվելով լճում՝ Հրազդան գետով հասել է մինչեւ Երեւան: Այստեղ այն գտել է մի կին ու նվիրել Ս. Անանիա առաքյալի անապատին, որտեղ Ավետարանը մնացել է մինչեւ ԺԹ. դարավերջ:

Ա. Հարությունյանը, լինելով վիմագրագետ, ուշադրության է արժանացրել նաեւ ձեռագրի կազմին փակցված խաչի մակագրությանը՝ տալով գիտական բացատրություն:

Ուսումնասիրությունը շարունակում է Մատենադարանի ձեռագրագիտության եւ Մայր ցուցակի բաժնի գիտաշխատող Ա. Սիմոնյանը՝ «Զորավոր» Ավետարանի մանրանկարչությունը» վերնագրով: Ա. Սիմոնյանը համամիտ է եւ գործնականում հիմնավորում է Ա. Մաթեւոսյանի այն կարծիքը, որ ձեռագիրը կրում է կիլիկյան մանրանկարչության դպրոցի դրոշմը: Արվում են արվեստաբանական արժեքավոր ընդհանրացումներ՝ ցույց տալով, որ այդ նմանությունները առաջին հերթին երեւան են գալիս խորանների՝ մի դեպքում խարիսխների, մյուս դեպքում՝ խոյակների

կենդանակերպ լուծումներով, անվանաթերթերի ճակատազարդերի ներսում կենդանիների նույնատիպ պատկերներով, ավետարանչի հագուստի ծալքերի գրեթե նույնակերպ արտահայտմամբ, ճարտարապետական հենքով, ինչպես եւ զարդապատկերների կատարման համանման եղանակով:

Հեղինակն իրավացիորեն կարեւորում է ձեռագրի մանրանկարչական հարդարանքը՝ ներկայացնելով դրա ընդհանուր բնութագիրը. «...ծաղկողը նախապատվությունը տվել է ե՛ւ Բարձր Հայքի, ե՛ւ Կիլիկիայի մանրանկարչության ավանդույթներին...» (էջ 25):

«Ձորավոր» Ավետարանի մանրանկարչական արվեստը քննելով՝ հեղինակը գալիս է այն եզրահանգման, որ ձեռագրի նկարազարդումներն արվել են ոչ թե մեկ, այլ, թերեւս, երկու տարբեր ծաղկողների կողմից, որոնցից առաջինը հեղինակն է խորանների, ավետարանիչների պատկերների, անվանաթերթերի, որոշ լուսանցազարդերի, իսկ երկրորդը՝ լուսանցազարդերի մեծ մասի, լուսանցային մանրանկարների եւ զարդագրերի, որոնք տարբերվում են իրենց կատարողական վարպետությամբ, պատկերման ու գունավորման ոճով:

Աշխատությանը կից տրված են ձեռագրի ընդարձակ նկարագրությունն ու Ավետարանի մանրանկարների լուսանկարները: Նկարագրության մեջ հիշատակարանները բերված են նաեւ աշխարհաբար տարբերակով, ինչից եւս աշխատությունը շահում է:

Սույն գրչագիր Ավետարանի ուսումնասիրությունը գրական կարեւոր հուշարձան է հայ միջնադարյան ձեռագրերի հրատարակության գործում եւ գալիս է իր արժանի ու պատվավոր տեղը գրավելու այլ ձեռագրերի հետազոտությունների շարքում:

ԱՆՆԱ ՊՈՂՈՍՅԱՆ
ՀԱԻ